2.3. Դատական ծախսերը

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝հայցագինը որոշվում է՝դրամական միջոցներ բռնագանձելու հայցերով՝ պահանջվող գումարի չափով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Այս պարագայում, նկատի ունենալով, որ հայցը ենթակա է մերժման, իսկ դատական ծախսերը բաշխվում են բավարարված հայցապահանջներին համամասնորեն, բացի այդ հայցվորը նախապես վճարված պետական տուրքի գումարի բռնագանձման պահանջ չի ներկայացրել, ուստի դատարանը գտնում է, որ նախապես վճարված պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Ինչ վերաբերում է դատական ծախս փաստաբանի խելամիտ վարձատրությանը, ապա կողմերը նման պահանջ չեն ներկայացրել, ուստի այդ հարցը ևս պետք է համարել լուծված:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234[12]-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հաշվի առնելով, որ տվյալ դեպքում ներկայացվել է պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված վեճ, հետևաբար դատարանի եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

3. Եզրափակիչ մաս

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101, 105, 109, 136, 189, 191, 192, 198, 234[12] և 360-362 հոդվածներով՝ դատարանը

ՎՃՌԵՑ

1. <<ԱՅԹԻԷՍ ԱՐՄ>> ՍՊ ընկերության ընդդեմ ՀՀ ոստիկանության, պատասխանողի կողմում ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ՝ <<Լեգիոն-9>> ՍՊ ընկերության՝ ՀՀ ոստիկանության կողմից ավտոմեքենաների վթարային տարհանման ծառայությունների ձեռքբերման նպատակով 16.11.2022թ-ին հայտարարված թիվ <<ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՃՈ 2023/ՎԹ/ՏՀՄ>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.11.2022թ-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված <<ԱՅԹԻԷՍ ԱՐՄ>> ՍՊ ընկերությանը շտկում առաջարկելու, ապա հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին կայացված որոշումներն անվավեր ճանաչելու և <<ԱՅԹԻԷՍ ԱՐՄ>> ՍՊ

ընկերության հայտում առկա անհամապատասխանությունները շտկելու մասին որոշում ընդունելուն պարտավորեցնելու պահանջների մասին հայցը մերժել:

2. Որպես դատական ծախսեր՝ նախապես վճարված պետական տուրքի և փաստաբանի խելամիտ վարձատրության հարցերը համարել լուծված:

3. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԴԱՏԱՎՈՐ՝ *ԵՐԵՄ ԵՍՈՅԱՆ*

Digitally signed by
YESOYAN YEREM
2711740048
Date: 2023.02.08
15:28:19 AMT